— Այո, կարելի է, բայց ո՞վ դիտէ ղեկավարել։

— Ես կ'ուզեմ փորձել զայն Աստուծոյ օգնութեամբը, ըսելով քահանայն տեղէն ելաւ որ երթայ։

Սակայն իրեն բարեկամը չթողուց զինքը, աղաչելով իրեն տեղը նստիլ և խեղճ տղայքը մխիթարել, որոնք իրեն շատ կը կարօտէին. ինքը փութով գնաց ձեռք առաւ ղեկը. ապա Եկիտիոսին հարցընելով ուսաւ որ՝ պէտք է զայն միշտ շիտակ բռնել, վասն զի երկու հողմոց մէջ կը տարուբերէին՝ ոչ առաջ և ոչ ետև երթալով. իսկ եթէ 'ի ձախս կամ յահեակ շեղէին նաւակին կործանումը կը հասնէր։

Թէպէտ և իշխանը երկու ձեռօք հաստատուն բռներ էր ղեկը՝ աչքին ուղղութեան նպատակ ունելով կոտրտած դրօշին բեկորը, սակայն սիրտը չիհանդարտելով յաճախ կը հարցընէր ծերոյն նաւակին դիրքը, և անոր խրախուսովը նոր զօրութիւն կը ստանուր։

Այն միջոցին ջուրը սկսաւ նաւակին մէջ ցեղուլ ալեաց թափէն. միւս իշխանը մէկ կողմանէ պարպելով հանդերձ՝ չէր կարող ջրոյն սաստկութեանը դիմակալել. վարժապետը փայտի պէս անշարժ ինկեր էր, օգնութեան կանչեցին զինքը, բայց ողորմելին գլուխը վերցունելով և նորէն այն սպիտակ փրփուրներէն ահաբեկելով նստարանին տակ կը ջանար մտնալ։

Բարոյական սկզբունքէ զուրկ այսպիսի մարդ մը չէր տեսած քահանայն, և այս առթով բոլոր տարակոյսը փարատելով՝ հաստատեց մտացը մէջ թէ անոր վրայ ունեցած դէշ համարմունքը իրաւացի էր. և սկսաւ յորդորել տղայքը որ իրեն հետ ցլխարկով ջուրը դուրս թափեն։ Գործոյս յաջողութեամբ կամաց կամաց ողողման առիւը կ'առնուէր։

Կը շարունակուի։

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 31)

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՏՈԼԱՊԵԼԼԱ, ԿԵՍԱՐ, ԱՆՏՈՆԻՈՍ

Տոլ. Դիւցազուն տէր, ծերակոյտն ասա 'ի դուրս հաւաքեալ ըստ քում հրամանի, խնդրեն մտանել։

Կես. Եւ զի՞ այդչափ յամեցին. մոցեն վաղվաղակի։

Անտ. (Ի մտանել նոցա). Ահաւասիկ են. երեսք նոցա առեալութիւն և մախանս գուշակեն։

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԿԵՍԱՐ, ԱՆՏՈՆԻՈՍ, ԲՐՈՒՏՈՍ, ԿԱՍՍԻՈՍ, ԿԻՄԲՐՈՍ, ԴԵԿԻՄՈՍ

Կես. Մտէք, յառաջ մատիք, հիմունք հաստատութեան Հռովմայ, և նեցուկք ամրութեան արքայութեան նորա, քաջ նիզակակից իմ. առ իս մատիք, Կասսիոս և Կիմբրոս, և դու իմ Բրուտոս։ Եհաս ժամ, եթէ օգնեսցեն մեզ երկինք 'ի վերուստ անթերի նուաճութեան տիեզերաց և հաճելոյ մտաց Կրասսոսի 'ի դժոխս, կործանմամբ գահին Կիւրոսի. ժամ է արդ զպակասորդ տերութեան Հռովմայ 'ի քառից ծագաց աշխարհի՝ ընուլ բովանդակել իրաւամբք մարտի. ամենայն ինչ կազմ և պատրաստ կայ, և Եփրատէս ծնայ Կեսարու. և վաղիւ՝ անդր ուղևորիմ։ Եկցեն ընդ իս Բրուտոս և Կասսիոս. Իտալիա և Գալլիա տացի 'ի ձեռս Անտոնիու։ Ոչ ինչ այլ ծնայ Հռովմայ և ինձ, բայց դիտել տեսանել որով անուամբ արժան իցէ ինձ թագաւորել աշխարհի. դիկտատոր էր Սիլլա, հիւպատոս՝ Մարիոս և ինքնակալ՝ Պոմպէոս. սա ես յաղթեցի. և շատ է ասել, եթէ նորոյ իշխանութեան՝ պէտք են նոր անուան։ Առ հասարակ հռչակ ընթանայ, եթէ զուր խրոխտանայ Հռովմ 'ի կռիւ գալ ընդ Պարսից. մի միայն արքայ բաւական է նկուն առնել զնոսա. ընդդէմ նոցա հանդերձի Կեսար և ոչ է արքայ. Կեսար, քաղաքացի ոք, է հզօր, քաջարի և գեղապանծ 'ի փառս յաղթանակի իւրոց մրցանաց. այլ իշխեսցէ թերևս յաւուր միում զյեղյեղուկ ռամկին զստամբակութեանն փորձել փորձ. ահ, միթէ իմով կենդանութեամբ յաղթեսցի Հռովմ. եթէ ոչ նախ բիւր անգամ սատակեսցի Կեսար։ Շատ է արդ, շատ է արդ. Ժողովուրդ Հռովմայ, ըսէք դուք ինձ և խելամուտ էք բանին՝ որում ցանկամ և վստահացեալս եմ. աղէ յուշ ածէք միանգամ զզօրութիւն իմ և զբարերարութիւն։

Կիմբ. Ժամ է արդ խօսելոյ, Կեսար. այն ամենայն թագ և գաւազան արքունի պտուղ մերոց վաստակոց, զոր դու մեզ յաղթանակ կարդես. թշնամանս թուին յաչս նախանձաւոր ծերա-

կուտիս և ամենայն ժողովրդեան, քան թէ շնորհք և բարերարութիւն: Մարիոս, Սիլլա, Կարբոն և Պոմպէոս անիրաւ իշխանութեամբն ոչինչ ժպրհեցին բաժանել ըստ կամի զսահմանս Հռովմայ, և պատգամ խրոխտաձայն արքայաբար առ մեզ որոտալ. մեք առաւելագունի իմն առ 'ի քէն բարեաց ակն ունէաք, Կեսար:

Կես. Զի՞նչ խնդրես, աղէ ասա:

Ամենեքին բաց յԱնտոնիոսէ. Ազատութիւն:

Կաս. Զայն և դու երդմամբ խոստացար ջնջել 'ի սպառ զինքնակալ տէրութիւն, և մեք աւուրն այնմիկ ակն ունէաք. այս էր և յոյս ցնծութե̃ Հռովմայ, որ արդ թշուառացեալ գերութեամբ՝ մնացեալ նստի յարիւն ապաժոյժ 'ի մէջ դիականց, բարդելով զծուխ մրրկին իւրոյ արեան ձապաղեաց. արդ աղէ յուշ լիցի քեզ երդումն քո:

Բրու. Թող մեծացի Կեսար. հաճեալ եմ և ես, այլ ազատ կացցէ Հռովմ. և զիա՞րդ որ իշխէն յինքոս՝ գերեսցի 'ի Տիբերիս. զի՞նչ օգուտ նմա, եթէ յանուանէ իւրմէ սարսեսցին տիեզերք, և գլխոյ գեղապանծ զնա պաշտեսցեն, յորժամ նա հեծէ գերութեամբ կապեալ 'ի շղթայս. զի՞նչ օգուտ և մեզ Հռովմայեցւոց գիտել եթէ Կեսար 'ի կողմանց կողմանց բազում գերի և կապուտ կողոպուտ 'ի ներքս ածէ. ա՜հ, չեն չեն մեր Պարսիկք ոխերիմք և արիւնախանձ թշնամիք. են են չարագոյն ևս քան զնոսա. ես գիտեմ զոր ասեմս:

Կես. Եւ դո՞ւ, իմ Բրուտէ:

Անտ. Լուա՞ր զյանդգնութիւն դոցա. տես արդ եթէ արժանիք ոմանք իցեն ներողութեան:

Կես. (Վայրկեան մի խորհեալ). Ապա ձերովդ ժպիրհ յանդգնութեամբ խնդրէք աշխատ առնել զիմ քաղցր մարդասիրութիւն. դուք զորս ստացայ ինձ սրով իմով և աղեղամբ. դուք՝ ծառայքդ Մարիոսի, սորուկք Պոմպէի. որոց սիրտ 'ի ներելոյ սրտմտութեանս միայն չիչէ զօգս զայս. ապաշնորհ յախուռն բերանք հասարակապետութեանն սիրով ջեռեալք, որոց առաջի Սիլլայի կարկեալ կացին լեզուք և 'ի քիմս կցեալ, և 'ի գթութենէ իմմէ ընդարձակեցան՝ այժմիկ խրոխտալ և յիմ վերայ. ոչ ինչ զանգիտեալ եթէ երբեք նուաստացի Կեսար հանել վրէժս ընդ կառափն ձեր. այս իսկ է որ ձեզ զանձեալ պահի 'ի յիւրմէ գոռոզ ժպրհութենէ: Անդ ուրեմն 'ի դաշտ Փարսալիոյ՝ անդ արժան էր առնել զայդ. արդ բաղդն իմ առ իս դարձաւ. եթէ յաղթել ոչ գիտացէք՝ ուսիք ծառայել:

Բրու. Ծառայե՞լ. ա՜հ քաջքդ. մա՜հ, մա՜հ. աղէ հրաման տուր, Յուլիէ. մի խորհիր զմէնջ 'ի վատութիւն. չիք 'ի մեզ սիրտ անարժան փառաց Հռովմայ: Ոչ ոք 'ի մէնջ անդ 'ի Թեսալիա նըւաստացաւ խնդրել 'ի քէն կեանս, այլ ինքնին ետուր պարգև մեզ 'ի նախատինս. դառն է մեզ այս կեանք, եթէ այսպէս մեծագնի հանդերձեալ է լինել. եթէ դու արքայութեան ցանկաս, արդ ուրեմն մի ևս խնայեր 'ի մեզ. հա՜ր սատակեա և նախ յինէն սկսիր:

Կես. Լուր դու. (առ այլս). Ի բաց գնացէք դուք յինէն: (Առ Բրուտոս). Յանդգնեցաւ Բրուտոս թշնամանել զիս. ա՜հ, կարեւէր խոցով հարեր զիս յոգի և ոչ իմանաս. սակայն մի երկնչիր, քաւ 'ի Կեսարէ խնդրել զքո կեանս. թող անդր 'ի բաց, Բրուտէ, զայդ անմիտ մոլեգին նախանձաւորութիւն հայրենեաց, ծերակուտին և Հռովմայ: (Բրուտոս կամի գնալ). անսա ինձ, կաց առ իս, քեզ միայն է զէնընկէց ուժաթափ առնել զանձն իմ. կաց մնա առ իս, իմ հոգւոյս հատոր, իմս Բրուտէ:

Բրու. Արիւն իմ բոլոր քո է Կեսար, եթէ դու զբան քո պահեսցես. իսկ եթէ դու բռնաւոր ոք իցես, խորշիմ գարշիմ 'ի սիրոյ քումմէ: (Կամի գնալ):

Անտ. Կաց մնա:

Բրու. Ես ընդ Անտոնիոսի. ընդ ոչ Հռովմայեցւոյ մնալ ոչ կարեմ, և որ խնդրէ թագաւոր՝ չէ Հռովմայեցի (Ելանէ):

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԿԵՍԱՐ, ԱՆՏՈՆԻՈՍ

Անտ. Ո՞չ այս այն բանք են՝ զոր ասէի ցքեզ. արդ համարիցի՞ս դու եթէ բնութիւնն մեղկել կարասցէ զապառումն զայն. թող անդր 'ի բաց զբանդ: Թող լացցէ Բրուտոս՝ եթէ ախորժէ, ընդ աւերն Հռովմայ. սակայն ծածկեսցի 'ի նըմանէ արիւն ծնողին՝ զոր հալածէ. արժանի մահու է այրն ապաշնորհ և յանդուգն, որ զբարերարութեամբ քով այպանեաց. հա՛ն այսուհետև 'ի սրտէ եթէ որդի քո է նա:

Կես. Ա՜հ. չեմ այդմ բանի բաւական. զի սիրեմ զնա:

Անտ. Եթէ այդպէս, ապա իջցէ Կեսար յաթոռոյ իւրմէ. մինթէ հանդերձեսցի՞ն քեզ գահոյք 'ի ձեռաց նորա. իսկ դո՞ւ իցես իշխան Հռովմայ. և ոչ Կասսիոս, Կիմբրոս և Դեկիմոս անծանօթք ոմանք 'ի սինկլիտոսէն՝ որ սնոտիացեալ խրոխտացան 'ի վերայ ինքնակալիդ տիեզերաց, յանդիմանել կշտամբել սպառնալ առ քեզ. և դեռ ևս կենդանի՞ կան նոքա:

Կես. Նոքա հաւասար իմ են բարձակից. այլ ընդ ձեռամբ իմով ունիմ զնոսա, և գիտեմ քաջ խաղաղութեամբ ածել նոցա լուծ:

Անտ. Մարիոսի և Սիլլայի չէր արդեօք այդչափ խնայել յարիւն դոցա, այլ չարաչար մահու պատուհասիւ վախճանել:

Կես. Բարբարոս ոմն էր Սիլլա. արիւն և հուր և գազանացեալ բարկութիւն զարքայութեան նորա յօրինեցին գահ. կեղեքեաց նա զՀռովմ, և ամենեցուն գտաւ ատելի. բայց ես խնդրեմ լինել սիրելի: Գիտեմ քաջ զբնութիւն ռամկին, զի առ օրին յատելութենէ 'ի սէր փոփոխի. եթէ ծանր թուեսցի նմա արքայութեան շուք, քաղցրասցի նմա գութ մարդասիրութեանս. ընդ սովին ծաղկօք ծածկեմ ես զվիհն՝ յոր հոսեմ զնոսա. ողոքեմ զգազանն և 'ի կապելն զնա. քաղցրութեամբ որսամ և գգուանօք նուաճեմ, և յաղթանակ թշնամեաց զսէր իմ կանգնեմ:

Անտ. Մինչև ոչ տիրեսցէ ահ քո և երկիւղ 'ի վերայ նոցա, ոչ թագաւորես:

Կես. Ոչ, ոչ կամիմ եթէ երկիցէ ոք 'ի Կեսարէ, բայց որ զէն ընդդէմ հակառակ շարժեսցէ:

Անտ. Այլ զեղծանիցի արդեօք Հռովմ քոյով քաղցրութեամբ:

ԿԵՍ. Հռովմ, ցարդ նա պաշտօն հարկանէ իմում բարերարութեանս. ապէ միանգամ հայեաց դու 'ի տաճար անդր, զոր կանգնեաց նա իմում մարգասիրութեանս:

ԱՆՏ. Երկիր, գուցէ յաւուր միում և այլ կառուսցէ 'ի շնորհս վրէժխնդրութեանն: Երկիր 'ի արտից նոցա, որ 'ի խոր խոցեալ, կուրացեալ են նախանձու, և ցնորիւք դանդաչեն. մոլին Կասիոս կանխաւ գուշակեաց՝ եթէ ձեռն իմ այս գիցէ քեզ այսօր 'ի գլուխ թագ արքայական, և յերեսս իսկ քո իշխեաց մրմռալ. պարտ էր գոնեա յապաստամբաց ատի աներկիւղ լինել, և 'ի նեռից նոցա կալ յակատանի:

ԿԵՍ. Եթէ գոյր յիս երկիւղ, հատուցեալ էր իմ նոցա զարժանն. այլ զի է քեզ ատելութեան ինձ թելադրել խորհուրդ. շատ է արդ. ծն, երթիցուք այսուհետև, և 'ի բաց մերժեալ զերկիւղ սնոտի կասկածանաց և զվրէժխնդրութիւն, մարդասէր կամաք թագաւորեացուք 'ի վերայ տիեզերաց, որ ինքնին մեզ զպարանոցս իւր 'ի ներքս ածէ զծառայութեանն առնուլ սամեռէս:

ԲԱՆԱԼԻՒ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 381)

333 Որոնք են երեք տարերքն՝ որք ընդհանրապէս կը պատճառեն սովորական կըրակը: — Ջրածին կաղն, ածուկն և թթուածին կաղն. առջի երկուքն կիզանուտ նիւթոց մէջ կը գտուին. իսկ թթուածին կաղն կու գայ օդէն՝ որուն մէջ անոնք կ'այրին:

334 Ի՞նչպէս կ'ըլլայ կիզումն: — Լուցկի մը կը հաղորդէ զկրակը կրկնածուտ (bicarbonato) ջրածընին՝ որ կիզանուտներէն կ'ելլէ. այս կաղը խառնուելով օդուն թթուածընին հետ՝ առաջ կը բերէ դեղին բոց մը. ասիկայ ալ կը տաքցընէ անոնց ածուկը, և զուգակցիլ կու տայ թթուածընին հետ, ուսկից առաջ կու գայ ածղային բրուտն:

335 Ի՞նչ բան է ածղային թթուտն: — Զուգադրութիւն մ'է $^1/_2$ ածղուկի և 1 թթուածին կաղի:

336 Ի՞նչ բան է կրակն: — Բաղադրութիւն մ'է՝ լուսոյ և ջերմութեան պատճառած այրելի գոյութեանց կիզումէն:

337 Ինչու՞ համար կրակն տաքութիւն կը պատճառէ: — Որովհետև քիմիական ազդեցութեամբ՝ ծածկեալ ջերմութիւն կը հանէ օդէն և կիզանուտ նիւթերէ:

338 Որոնք են այն փոփոխութիւնները՝ զոր կը կրեն իրենց քիմիական բաղադրութեան մէջ թէ օդն և թէ այրելի նիւթք՝ կիզման պատճառաւ: — Ա. Օդուն թթուածընի մաս մը կիզանուտից ջրածընին կը զուգադրի՝ և կը խտանայ 'ի ջուր: Բ. Ուրիշ մաս մ'ալ կը զուգադրուի ածղուկին հետ, և կը փոխուի ածղային թթուտ:

339 Ինչու՞ համար կրակն քիչ մը այրելէն վերջը կարմիր կ'ըլլայ: — Որովհետև բոլոր ածղային մակերևոյթն տաքցած է. ամեն մէկ մասն ալ արագութեամբ կը զուգադրի օդուն թթուածընին հետ:

340 Ինչու՞ համար երբեմն կիզանուտի մը ստորին մասն կարմիր կ'ըլլայ, մինչդեռ արտաքինն սև է: — Որովհետև հաստատուն կիզանուտք կը պահանջեն աւելի բարձր աստիճան տաքութեան օդուն թթուածընին հետ զուգադրուելու համար. հետևաբար իրենց ստորին մակերևոյթն տաք ըլլալով՝ թթուածընին հետ կը հաղորդի և կը կարմրընայ. իսկ արտաքին մակերևոյթն դեռ նոյն աստիճան տաքութիւն չունենալով սև կը մնայ:

341 Երկու կրակներէն՝ որոնց մէկը բոց արձըկէ և միւսը կարմրցած ըլլայ՝ որն աւելի շուտ կը հատնի: — Ամեն կիզանուտք՝ որ բոց կ'արձըկեն՝ աւելի շուտով կը հատնին:

342 Ինչու՞ համար գետնածուղն՝ որ բոց կ'արձըկէ, աւելի շուտ կը հատնի քան զայն՝ որ կրակով կարմրցած է: — Որովհետև անբորբոք կաղերն՝ որ կը ցնդին ածուղին բոցանալուն ատեն՝ կը շուտցընեն կիզումը:

343 Ինչու՞ համար նոյն այն ածուղն երբոր պայծառ և խիտ կրակ մը դառնայ՝ աւելի ուշ կը սպառի քան թէ բոցացեալ այրման ատեն: — Նախ, որովհետև թրուչական կաղերն՝ որ ուրիշներէն առաջ կ'այրին, շուտով կը բաղակցին օդուն թթուածընին հետ, և չեն թողուր որ այն օդն ածուղին ազատ ածղուկին վրայ հասնի. ասանկով ասիկայ կորսնցընելով բոլոր իր առաջուց ունեցած ջրածղային թռչական գոյացութիւնները՝ զգալի կերպով քանակութենէն կը նուազին: Բ. Կաղերուն արձակումն դադրելուն պէս, թթուածինն ուղղակի կը հասնի ածղուկին վրայ, և հետը ուժգին կերպով բաղակցելով կը պատճառէ սաստկութիւն ջերմութեան, բայց աւելի դանդաղութեամբ. որովհետև այս պարագային մէջ հաստատուն մարմին (ածղուկ) մ'է թթուածընին հետ բաղակցողն:

344 Ինչու՞ համար աւելի շատ ծուխ կը հանէ այն ատեն կրակն՝ երբ կը սկսի բորբոքիլ, քան երբ ածուղներն կարմրցած ըլլան: — Որովհետև կիզանուտներէն կ'արտադրին թռչական գոյացութիւններ և ածղուկի մասունքներ՝ զորոնք կիզումն չէ ըսպառած, և այն աւելցածն ծուխով կը լմննայ: